

որ սակաւք ոմանք շեղուելով ի սնցանէ եւ մոլուելով օտարօտի գաղափարաց եւ թիւք գիտութեանց մէջ՝ չարաչար կը սխալուին եւ կմեղանչեն Աստուծոյ եւ Ս. Եկեղեցւոյ դէմ: Եւ կարծելով ճշմարտութիւնը գտանել եւ ճշմարիտ առաքինի լինել տարբեր տարբեր եւ անձնամոլ ուղղութեամբ՝ իսպառ կը մերկանան Ս. Հոգւոյն շնորհը: —

Արդ ո՞վ չբաղձար այսպիսի հոգեւոր կեանք արդիւնաւորելով վայելել:

Հարկ է ասել՝ զի ոչ ոք հակառակը մտածել անգամ կյօժարի թո՛ղ թէ գործել:

Սակայն միայն բաղձալն ի՞նչ օգուտ կարտադրէ առանց գործոց:

ՎԱՀՐԱՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆԿՈՒՆԻ:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՆԱԾԱՅ, ՈՒՐԱՑՈՂԱՅ,
ՀԵՐԶՈՒԱԾՈՂԱՅ ԵՒ ԲԺՅԱՆԵՂՈՅ ՅԵԿԵԼԵՅԻՈՅԸ ՀԱՅՈՅ:

(Շարձանքն ինչ, որ թ. ԺԱ. է շրջան Ըրդ.)

ՅՕԳ. ԼԸ.

Յակոբ Սեդէ (անարժան) Աստուծոյ:

(Եւք Տեառն 1409): — Վեոտրդի Գրիգորի Անաւարդեցւոյ Յակոբ Ապիսկոպոս Սեդէ՝ յեա վախճանի Աստուծոյն Աթուղիկոսի Ամբրոնեցւոյ, նստաւ Աթուղիկոս ի Սիս՝ կոչեցեալ Յակոբ Ի, յամին 1327:

Ի գործս նորին Յակոբայ ոչ գտանեմք զանարժանութիւն ինչ անվայել աստիճանի կաթողիկոսութեան, զոր Միքայէլ Սալանդեան զրոշմէ ի ճակատնորա իբրեւ կնիք մեղադրանաց, որով յանցուցեալ ինչ իցէ ընդդէմ սրբութեան եկեղեցւոյն:

Եւ այն Հայոց կամ ուղղափառութեան հաւատոյ. յորոյ ի ժամանակի հայրապետութեան բորբոքէին Ունիթուեանքն ասացեալ հերձուած ողբ ի Հայոց զհրդէհ տաւրութեան ի մէջ ազգիս մերոյ ընդ բանս կրօնից եւ ծիսից ի Ալեքին Հայաստան. զորոյ զգործս համառօտեմք ահա ի Չամչեան հատորոյ:

Ընդ ամբաստանութիւնս Ունիթուեանց զազգէ մերմէ առ պապն Հռովմայ, իբրեւ դրեաց նա առ Յակոբ Աթուղիկոս ի քննութիւն ամբաստանութեանցն, սա ծանոց դեսպանաց պապին զստութիւն այնոցիկ, որ եւ հաւանութեամբ եպիսկոպոսաց եւ վարդապետաց ոմանց թուղթ ընդհանրական զրեաց առ Հայս, առ ի ձեռնառլ ինիլ գործակցաց Վրդնեցւոյն, եւ առ համախօհս նորին, զեմի տեղի գայթակղութեան տայցին յազգին:

Եւ իբրեւ յաւելին (1331) զանկարթութիւնս ընդդէմ ծիսից եւ արարողութեանց Ակեղեցւոյ մերոյ աշակերտեալքն Վրնեցւոյն եւ այլոց համախօհից նորա, ոչ եւս հանդուրժեալ Յակոբ Աթուղիկոսի ընդ արքային Աւետի Արքի, կալան զբազումս ի խռովարարաց անտի եւ բանտարկեցին, եւ զոմանս արքայորեցին:

Արդուստ տանն Հայոց Ալեքիկոյ եւ աւերած երկրին էր միշտ յընդունայն յաւերածութենէ թագաւորաց մերոց ընդ արեւմտեայս եւ առաւել ընդ պապն Հռովմայ, որ սնտալ յուսով պատրելով զնոսա, մեծամեծ խոտմամբ եւս զողանայր զհաւատս Հայոց ընդ ձեռն արբանեկաց իւրոց սիւսելոց յանտերունջ երկիրս մեր, ուստի եւ թագաւորք մեր ի ժամանակին՝ չունելով քաղաքականութիւն երբեք:

ատէին զգրանցի զիշխանութիւնս և յարէին ի հեռաւորս. ուստի և յաճախութեամբ թղթոց և փոխադարձ հրթիռներով թեանց՝ զգրուեցին ի վերայ իւրեանց զսուրբանս Ազիպտոսի յաւեր և ի կործանութիւն հրկրին առհասարակ. և պապական հովանաւորութիւնն այսչափ միայն եղև, զի ոչ միայն պապական եղև բարձման գահին Արիւկիոյ, այլ և յայտն իսկ ժամանակի առթիւ գծուած էր արմատացաւ ընդ մէջ Առնի և Պաթուղիկոսին, ընդ որ ցարուցեալ արքայի ընկեց զՅակոբ Բ. յԱթուոյ Հայրապետութեան (1341), և կացոյց փոխանակ նորա զՏէր Մխիթար Քանեցի:

Եւ զի Յակոբ Սեցի յետանկանելոյ իւրոյ յԱթուոյ և յետամաց զնաց ի Վաղարշա առպապն Իննովիկնաթոս, զրէ Չամչեան, և ցրել լանձնէ զամբաստանութիւնսն որ յԱնիթուեանց անտի, և վերադառնալ, զորին և մեք ապաստան առնեմք ի սփուրդագրութիւնս ազգային ժամանակակից պատմադրաց. այլ այսմ եւթ հաւատք ընծայեմք, զի յետ վախճանին Մխիթարայ կալու Յակոբ զԱթու կաթողիկոսութեան զամս այլեւս չորս, և (1355) մեռաւ:

ՅՕԴ. ԼԹ.

Գրիգոր Թ. Մասնակցեանց ապարանք Պաթուղիկոսի Սէ: (1440): — Յետ վախճանին Յովսէփայ երբորդի, զորոյ զկաթողիկոսութիւնն չեւէր ընկալեալ ազգին, ի ձեռն ընտրութեան տմանց նստաւ Պաթուղիկոս Գրիգոր Թ. Սուրբեկեանց առանց հա-

ւանութեան Երեւելեան Ապիսկոպոսաց, ի ստիպել նորա ի պապատութենէ ձեռնադրել անանց ընտրութեան, առ օրին զՀինգեպիսկոպոսունս, բողոք կալան եպիսկոպոսք կողմանցն Արիւկիոյ առ Երեւելեան եպիսկոպոսունս Հայոց յաղաքս յանարգութիւն հասանելոյ Աթուոյն Սեցոյ, և յաղաքս առանց հաւանութեան ազգին ամբաստալոյ Գրիգորի ի Պաթուղիկոսութիւն, որոց համաձայնութեամբ եպիսկոպոսացն Արիւկիոյ ոչ հաւանեալ ընդ ընտրութիւն նորին Գրիգորի, հաստատեցին ի միջի նորոգ ընտրել կաթողիկոս ազգոյին հաւանութեամբ կամ զնոյն ինքն Գրիգոր, կամ զայլ ոք, և նստուցանել կաթողիկոս ոչ ի Սիս, այլ յԱջմիածին, յաղաքս որոյ և հրաւիրեցին զԳրիգոր դալ և նստել աստ յԱջմիածին, այլ ի չառնուլ նորա յանձն գայս հրաւեր, յողով մեծ դումարեալ ի Վաղարշապատ, համահաճութեամբ ընդհանուր Եղգին զԱթուոյն Հայրապետական հաստատեալ վերստին ի Ս. Աջմիածին՝ կացուցին Պաթուղիկոսը զՏէր Արապկոս Վերապեցին կոչեցեալ յամին 1441:

ՅՕԴ. Խ.

Շահաբաւ Ե. հաւաքուլ հաւաքոյ Հայոց զամս 25: (1586-1603): — Շահաբաւ Ե. որ յետ եօթնեալան ամաց հաշտութեան իւրոյ ընդ Օսմանցիս, զրգուեալ ի փոխուցեղացն Հայոց բազմաց և Վրաց ի ձեռաց Օսմանեան բռնաբան, ընդ որոց ձեռամբ էին աշխարհ Երարատեան և

Վերջ, ևս և ի սահմանամերձ ամիրայից
Կարաց ապստամբելոց յՕսմանեան Խի-
րապետութենէ, պատրաստեցաւ ի պա-
տերազմ զանխուր յարձակել ի վերա-
քաղաքացն՝ սրոց տիրեալ էին Օսմանեանք
ի սահմանս պետութեան Պարսից. առ որ
եկեալն էր և Մելքիսէթ Վաթուղիկոսն
մեր:

Այլ քանզի մեք զհալածանս միայն
Շահաբասայ գրել ունինք աստանօր յա-
բուցեալս ըստ կարգի նորա ի Հայաստան,
սորին ազադաւ որքան ինչ չարիս հառե-
ցեալ է նորա ազգի մերում և հայրենե-
կաց, զայն և եթ զրեմք ըստ ամաց իշ-
խանութեան նորա:

Ի ժամանակի աստ յայտնի յորում
տիրեաց Շահաբաս Վապրիժոյ, ժողով-
եաց նա ի քաղաքէն և յամենայն գաւա-
սաց նորա զամենայն եկս և զպանդուխտ
Հայս և զՀրեայս, և վարեաց զնոսա յաշ-
խարհն Պարսից, և ապա ասպատակ սրի-
ռեալ ընդ ձեռն զօրովարաց իւրոց յեր-
կիրն Ասիսիւսեանայ և փախուցեալ անտի
զզօրս Օսմանցւոց, խաղաց և ինքն գհեա
ի ներքս յԱյրարատ, և զօրպետն իւր
Օլիիղար էառ զքաղաքն առանց պա-
տերազմի:

Զուղայեցի Հայք ելեալ ընդառաջ
բազում պատրաստութեամբ ընկալան ըզ-
Շահաբաս, և արքայափայել ընդունե-
լութիւնս արարին նմա. որոց և միամը-
սութեամբ և անձընծայ հաւատարմու-
թեամբ ցուցեալ զփարթամութիւն ի
պարզեւ Շահին, շարժեցին զընչաքաղ-
ցութիւն նորա, որով խորհէր առնուլ
զամենայն քաղցրութեամբ, առ որ եկաց
զաւուրս երիս:

Իբրեւ ետնուի ի Ասիսիւսեան, առաքեաց
անախ զօրօք զՎապրիւսեայ նախարար իւր
ի վերայ Վանձակայ առնուլ զայն և ըզ-
գուշանալ անդ զօրացն Օսմանցւոց չը-
յարձակել յանկարծ ի վերայ իւր. իսկ
ինքն վերափառու երեալ ի Ասիսիւսեան
և յառաջ խաղացեալ պաշարեաց զԱ-
րեան, և ժողովեալ ի գաւառէն զամե-
նայն քաջս ի Հայոց, զօրս և ի միասին
գումարեալ ընդ Վրաց, առաջի կացոյց
զնոսա պատերազմին՝ յանդիման ոմբացն
հոսելոց ի պարսպէն, յորմէ բազումք յա-
ռաջուտ անկանէին, բազումք ևս յե-
տուստ ի ձակատու զօրացն Պարսից. այլ
(1604) յերկարիլ պոշարման ամրոցին՝
սիւռեաց աստի Շահաբաս ասպատակ
զզօրս իւր ի գաւառս Հայաստանի եզ-
եալս ընդ իշխանութեամբ Օսմանցւոց՝
Շիրակայ, Վաղարշակերտու, Երտազու
և Ապահոնեաց, ի կողմանս Վարնոյ,
Բասենոյ և Կնուսայ, զօրս աւերեցին և
աճին աւաք բազում և գերի բազում
յազդէ Հայոց:

(1604): — Ասիսեարն Շիրազայ Ալ-
լահվերաի իման՝ որ հրամանաւ Շահաբա-
սայ զնաց յօգնութիւն Սահմատ փա-
շայի գաւառին Բղնունեաց, իբրեւ խաբե-
ցաւ ի նմանէ, յարձակեալ յամենայն
սահմանս գաւառին, վարեաց ի գերու-
թիւն զամենայն երիտասարդս և կանայս,
և զայս կոտորեաց ի բերան սրոյ. անտի
մտեալ ի Վասպուրական և ի սահմանամերձ
գաւառս աշխարհին, գերեաց ի չօրից գա-
ւառաց աստի՝ Բղնունեաց, Առբերանոյ,
ի Քաջբերունոյ և ի Տոսպայ ոգիս քը-
տան երեք հազար յազդէ, Հայոց բաց ի կո-
տորելոցն, զօրս և ամենայն ազխիւք երեք

Ալլահվերտի առ Շահարաս, որ նրան տէր տակաւին հանդէպ Արեւանայ, (1605) զոր առեալ յետ ինն ամսոց պատերազմի՝ զաշխարհն համօրէն արար ընդ տէրութեամբ Վարսից:

Աստանօր զՎաւրիթ և զՄեկքիսէթ կաթողիկոս Հայոց կոչեաց առ ինքն Շահարաս. լուեալ եթէ մեծ գումար դրամոց պարտական էին նոքա Օսմանցւոց ի ժամանակի տէրութեան նոցա, պահանջէր ի նոցանէ տալ յարքունիս իւր որչափ ինչ պարտական էին նոքա գումարս դրամոց, զի օրէնք են, ասէ, ի տիրել թաղաւորի այլու՝ աշխարհի՝ ամենայն գանձք և ստացուածք պարտելոյն պարտի մտանել յարքունիս. ընդ որ զահի հարեալ նոցա և ի չկարելն լրիւ հատուցանել, մատնեցին և սոքա զՍրապիոն կաթողիկոս՝ որ կալեալ ի Յուդայեղաւ ի բանտի, և կապանօք և գանիւք վճարեալ զոր ունէր և զոր փոխառութեամբ հազիւ լցուցեալէր՝ արձակեցաւ երաշխաւորութեամբ, և ձողոպրեալ զանձն խոյս տալ ի Վան տկարացեալ և տուայտեալ ի հարուածոց գանիցն, և ապա անտի յառաջին տեղին իւր յԱմիթ (1606) փախճանեցաւ:

Այս ամենայն աւարառութիւնք և աւերմունք աշխարհաց և գերեվարութիւն Շահարասայ լուր եղեալ ի Աստանդնուպօլիս ի դուռն արքային Օսմանցւոց՝ Սուլթան Ահմէտի նորոգ գահակալելոյ, որոյ հուսկ ամենայնի միաբանեցուցեալ զիշխանս իւր և զնախարարս, առաքեցին զՍինան փաշայ անուանի զօրավարն ամենայն զօրօք Օսմանցւոց ի վերայ Շահարասայ:

Իսկ Շահարաս իշխան կարգեալ Արեւանայ և բոլոր գաւառին զԱմիրզիւնէ նախարարն, ինքն բոլոր բանակաւն հանդերձ յառաջ խաղաց զնալ ի վերայ Վարսից, այլ հասեալ ի Շիրակ գաւառ, լուաւ եթէ Օսմանցիք եկեալ են ի Վարին զօրավարութեամբ Սինան փաշայի, երկուցեալ Շահին յերեսաց նորա, դարձ արար անդրէն յԱրարատ և բանակեցաւ յԱրուանդակերտ որ ի ճակատ գաւառի:

Եւ զի զիտէր Շահարաս, եթէ ոչ կարէ զգէմ ունել զօրութեան Օսմանցւոց, յորժամ վերստին լուաւ, եթէ Սինան փաշայ ելեալ ի Վարնոյ դոյ տաղնապաւ ի վերայ իւր, զհորհրակն իւր յառաջագոյն եղ անդէն իգործ, այն է զհամօրէն բնակիչսն աշխարհին վարել ի Վարսկաստան և զաշխարհն բովանդակ աւերել առաջի Օսմանեան բանակին, զի մի գտցէ ուրեք բնակութիւն և պաշար զօրաց, որպէս արար յառաջ քան զայս ընդ ձեռն Ալլահվերտի խանին Շիրազու ի Վաջբերունիս՝ ի գաւառս նորա յԱրձկէ, յԱրձէշ, ի Վան և յամենայն գաւառս նորին ի սահմանս Բիւռնեանց և Ուտունեանց, զորոց զբնակիչսն բաց ի ըսպանելոցն, բերեալ էին և խմբեալ յերկրին Արեւանայ:

Աւստի և առ ի պատրել նորա զբնակիչս երկրին, կոչեաց զիշխանս և զմեծամեծս Հայոց, յորս երեւել էր ալա Տէրաքէր ասացեալ Յովհաննէս երէց Արեւանցի, և կեղծաւորութեամբ առաջի արար նոցա՝ զի գաղթեցնեն նոքա բոլոր բնակչօք երկրին յիւրաքանչիւր տեղեաց և ի գաւառաց, զի մի անկցին, ասէ, ըս-

տացուածք և ինչք նոցա ի ձեռս Օսմանցւոց, եթէ վանեցուք մէք, ասէ, ըզնոսա, դարձցին յիւրաքանչիւր բնակութիւնս և ի խաղաղութեան կացցին ընդ իշխանութեամբ մերով. իսկ եթէ նոքա յաղթեցին մեզ, դարձցին և եղիցին ընդ նոցին իշխանութեամբ. ընդ որ թէև պատճառս ետուն իշխանքն անհնարին լինելոյ դաղթել, զի աշնանային էր ժամանակն, և ձմեռն վերահաս, այլ ոչ ինչ անսացեալ նոցա Շահաբաս առ ահի Օսմանեան զօրաց, որք մերձ էին ժամանել յԱյրարատ, իւրաքանչիւր դաւառաց և սահմանաց աշխարհին. այոց վերակացուս կարգեալ ի նախարարաց իւրոց, և ի վերայ նոցա զԱմիրգիւնէ նախարարն Արեւանայ, հրաման ետ նոցա՝ զի ուր և հասանիցեն, առհասարակ վարեցեն յաշխարհաց անտի զբոլոր բնակիչս ամենայն աղիւիւք և անասնովք, և ժողովեցեն ի դաշն Արարատեան՝ տանել անտի յաշխարհն Պարսից, և եթէ ոք ոչ կամիցի դնալ, առցեն զամենայն ինչս նորա, և գերի արացեն զնա կամ օպանցին առանց միում ումեք խնայելոյ՝ ծերոյն և երէտասարդի:

Ժամանակակիցն Շահաբասայ Առաքել պատմագրող անցնցս ոչ նշանակէ յանուանէ զգաւառս Արեւանայ, որոց վարեցան բնակիչք ի Պարսկաստան, բաց ի գաւառացն Ասպուրական նահանգի՝ ի գաւառացն Բընուենաց և Ուշտունեաց, և ի նոցին քաղաքացն՝ Անայ, Արծկէոյ, Բաղիշոյ և ի սոցին սահմանաց, այլ և Վարնոյ, Բասենոյ, Խնուսայ, և մասնաւորապէս ի գաւառացն Շիրակայ, Աղարշակերտու, Երտաղու և Ա-

պահունեաց, զորոց գրեցաք ի վեր անդր, զորոց և բնակիչս առհասարակ վարեալ էր ամօք յառաջ Ալաշկերտի և ածեալ յԱրեւան:

Իայց Միքայէլ Չամչեան, որ զայս ամենայն պատմութիւն աւերանաց աշխարհիս մերոյ առնու ինոյն Առաքեալ պատմագրէ, յիշէ աստանօր յանուանէ իրրեկրկնութիւն և զառաջին սահմանս գաւառաց ընդ գաւառաց երկրիս Արեւանայ, յորս յայս նուագ սփռեցան նախարարք Շահաբասին հանդերձ իւրաքանչիւր զօրօք հանել զբնակիչսն և վարել ըստ առաջնոյն ի Պարսկաստան, սկսեալ ասէ, ի սահմանացն Շիրակայ մինչև ի Աօռի, ի Նախիջևանայ մինչև ի Վուր գետ, ի Աղարշակերտոյ մինչև ի յԱրտազ, և յԱրտազ գաւառէ մինչև յՈրմի և ի Վաղրէժ. նոյնպէս և ի սահմանս Բըղնունեաց և Ուշտունեայց, զոր երեւի կրկնութիւն արարեալ աստէն զառաջնոց գերիվարութեանցն և չուոց ժողովրդոցն ի յիշեալ սահմանաց Օսմանեան պետութեան:

Այլ ի սմին բռնավարութեան՝ որպէս կարգ բանիցն ցուցանէ, զբնակիչս երկրին Արեւանայ և նորին սահմանամերձ գաւառացն որպէս Վառնոյ, Արշարունեաց, որք են ի նմին Արարատեան դաշտին, միայն արտահանեալ յիւրաքանչիւր զիւղից բընակութեանց, նոյնպէս և զԱթոռս Աջմիածին յաւարի առեալ և մերկացուցեալ զնա՝ խառնեցին ընդ առաջնոյն վարելոց ի դաշն Արարատեան, ընդ որս ի մի բանակ կազմեցին ի նմին դաշտի, և վարեցին ըստ պատգնապաւ յառաջոյ բանակին Պարսից՝ մինչև ի Նախիջևան յամեն Ա-

բասխայ. ուր հասնալ Շահաբաս, և ըզկնի նորա Աինան փաշայ բոլոր Օսմանեան բանակաւ՝ յառաջ խաղացեալ և յառաջոյ իւր վարեալ զբանակն Պարսկական, զտեղի էառ ի Նախիջևան, և Շահաբաս յափն Երասխայ, ուր էրն բանակ բնակչացն ի բռնաւարութեան. ի սոսա բերին խառնեցին և զորս ի բնակչաց զեղջն Պառնուոյ զերեցին զօրքն Շահաբասայ և ի կոտորածէ նոցին որ յայրս Խորաձորոյն զօղեալքն էին իբրև յամբի ապաստանի:

(1605): — Եստանօր լուեալ Շահաբասայ եթէ Աինան փաշայ հասնալ է բանակաւն զկնի իւր ի Նախիջևան, մերձ երկց ժամուց ծանապարհ, ստիպեաց ըզզօրավարս իւր անցուցանել ձեպով ընդ գետն զժողովուրդն ամենայն, զի մի՛ անկցին ի ձեռս Օսմանցւոց. և զի և նաւք և լաստք ոչ բաւէին վասն ահազին բազմութեանն և ոչ իսկ յամել կարէին, թօթափնցին զօրավարք հետզհետէ զխաթամուժ ամբոխն ի գետ անդր յահ սպառնալեաց Շահաբասայ, որ յեզր գետոյն նստեալ զայրադինս որոտայր ի վերայ վարչացն: Եյսպէս եղև և անցք ջուղայեցւոց ընդ գետն զհետ մեծի բանակին ժողովրդեանն. յորոց բազումք հեղձան, ոմանք ի նորահասից վարէին ի զերութիւն, և այլք սպանանէին յերկիւղ և յահ զանդադելոցն, և ջուղայ քաղաք փարթամ եղև հրոյ ծարակ յետ ելից բնակչացն, զի մի՛ մնասցէ նոցա յոյս կրկին դարձի: Յետ որոյ բանակ բովանդակ ժողովրդեանն ընդ անձուկ և ընդ ափափայս զժուարուտս լերանց ածեալ ի յերկիր ապահով, անդ ետուն ձմերել

զնոսա. զոր ապա ի դարնան հանին ի Թաւրէզ. և անտի հասուցին ի Խորին Պարսըս յԱսպահան, զքաղաքացիս ի քաղաքս, և զղիւղացիս ի գիւղօրայս բնակեցուցին. և ամենայն Հայք զորս վարեաց Շահաբաս, էին տունք երկոտասան հազար՝ բաց ի կորուսելոցն ի չուս ծանապարհի:

Մեկքիսէթ Կաթուղիկոս փախուցեալ ի կէս ծանապարհէ՝ որ էր ընդ ժողովրդեանն վարելոյ ի Պարսկաստան, եկն յԱջմիածին և ժողովեալ զթագուցեալսն և փախուցեալս յԱպիսկոպոսաց և ի Վարդապետաց, յետ կալոյ անդէն ամիսս ինչ՝ գնաց յԱրևան և զտեղի էառ անդէն, զի անապատ էր դարձեալ Աջմիածին. իսկ Պաւլթ Կաթուղիկոս ընդ ժողովրդեանն վարեալ էր յԱսպահան:

Իսկ Աինան փաշայ ոչ ևս զհետ պընդեալ Շահաբասայ, իբրև լուաւ եթէ այնքան բազմութիւն ժողովրդոց փութով կարաց վարել ի Վալրէթ, անցեալ ընդ Երասխ, ընդ Հեր և Ջարեանդ գաւառ՝ գնաց ի Վան և ձմերեաց անդէն իւրով բանակաւն:

Եպա ի դարնան Ելլահվերտի խան հրամանաւ Շահաբասայ յորձակեցաւ յերկիրն, և արար գերի և աւար բազում ի մերձակայ սահմանաց Վասպուրականի, յորս կային Օսմանցիք, և տարաւ ի Վալրէթ:

(1606): — Յետ պարտութեան Օսմանցւոց յերեսաց Պարսից և յետ մահուն սպարապետի նոցին Աինան փաշայի, խաղաց Շահաբաս կրկին ի Պանձակ, և առեալ զայն պատերազմաւ և կոտորեալ զայլազգի բնակիչսն, եկն ի գաւառն Պան

դամայ՝ ի Վայոց - ձոր և բանակեցաւ անդ (1608). դարձաւ անտի ի Շամքոռ՝ մերձ ի Ղանձակ, և անդ ևս յետ տիրելոյ այնմ, արարեալ կոտորած մեծ՝ դարձաւ ընդ Ղալիբէթ ի Պարսկաստան. ուրանօր սէր մեծ ցուցանէր առ վտարեալ ազգ մեր թեթևութեամբ հարկաց, զի մի՛ փախիցեն գաղտնի:

Յաւերանաց աստի աշխարհիս մերոյ յառաջնոյն Շահաբասայ՝ պատճառեցաւ կրկին գաղթականութիւն Հայոց յայլ և այլ աշխարհս և յայլ և այլ պետութիւնս, յորս հարիւրաւոր ամօք յառաջ քաղաքականացեալք էին Հայք. զի փարթամք և մեծատուն աղիուականք՝ որ յիրեսաց գերեմարութեանս փախստեամբ ապաւինեալ էին ի քաղաքս ամուրս, ոչ ևս դարձան. ոմանք զնալիս ի Վ. Պօլիս, ոմանք ի Մոլդաւիա, ոմանք ի Մազքութ, յԵփրատիսան, ոմանք ի Վաֆայ յերկիր Ղլիմայ, այլք ի Պոզոնիա, ի Լէհս, և կէսք յայլ և այլ սահմանս, և բազումք ևս կրօնաւորք ցրուեալք յայլ և այլ յաշխարհս: Իսկ որք յետ մեկնելոյ աւարառուացն յաշխարհէս մերմէ՝ ազգատք և անկարողք ժողովրդեանն ելեալք ի թագըստենէ՝ դարձան և վերստին նորոգեցին զանձնիւր բնակութիւնս կործանեալս և այրեցեալս, զնոսին ևս վերստին ժողովցին և տարան յԱսպահան տունս իբրև հազարս:

(Ի յԵրուսաղիմ)

ԱՐԵՆ ԱՐԲԵՊԻԱՆՈՂԱՍ

ՊԱՏՄԱԿԱՆ

ԱՐԺԱՆԱՅԻՇԱՏԱԿ ԴՈՒԿԱՍ ԿԱԹՈՒԴՈՍ.

Արարատ Ամագրոյս մեծարգոյ թղթակիցներէն Պ. Պալուստ Շիրմազանեանց երջանկայիշատակ Ղուկաս Սաթուղիկոսի վրա գրած այլանդակ պատմութիւնը հանելով ի սրբոց Յակովբեանց յուխտէն յԱրուսաղէմ 1872 թուին տպուած գրքէն, իւր համոզմանց մէջ անհրաժեշտ պարտք կղնէ միարանութեանս վրա՝ ճրջմարտութիւնը պաշտպանել . . . և թոյլ չտալ մի ուղղափառ Սաթուղիկոսի ահուն և համբաւը յուժմէտս հերձուածողութեամբ արատաւորի նորա եօթանասուն և երկու տարի վախճանէն յետոյ (Տես Արարատ Լ. տարի, թիւ Գ):

Մենք մասնաւորապէս մինչև ցայսօր մեր այս սուրբ պարտաւորութիւնը չկատարեցինք, յուսալով որ մեր «ձեռքը կանցնի», հուսկ ամենայնի նշանակեալ գիրքը և ըստ այնմ մեր պարտաւորութիւնը կը կատարենք, յորմէ և այլ բազում աղանդակութիւնք ազդիս բաղմաշխատ և վաստակաւոր Սաթուղիկոսաց վրա գտնել կմակաբերինք:

Բայց տակաւին մեր ձեռքը չհասնելով գիրքը ցայս վայր, մեր ընթերցող ազգայնոց անտարբեր չիրենալու համար, ճրջմարտութիւնը յերեան հանելու կիտութեամբ. ճշմարտութիւն, որ եթէ հրապարակական թերթերի մէջ թագուցուած լինէր, լուծութիւն պահելը խոհմուծութիւն էր ժամանակիս խառն միջոցներին նայելով, բայց այսպիսի գրքի գուցէ անգիտու-